

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**


**ՍԱՏՆԱՆՆ ԿՐՈՒՄԻ ԿՐ ՅԱՐՁԱԿԻ ԱՂՕԹՈՂԻՆ ՎՐԱՅ**

Սատանան, քաջ գիտնալով, որ աղօթքն մեծ հրաշքեր եւ անսահման բարութիւններ կը ծնին, կը մօտենայ անոր, որ կ'ուզէ աղօթել: Նախ մահճակալին մէջ կը կռուի անոր հետ, հաճելի կը դարձնէ անկողինը, քաղցր քուն կու տայ, մարմինը կը ծանրացնէ, հոս ու հոն կը տեղափոխէ եւ կը թուլցնէ զինք: Դժուարաւ ոտքի կ'ելլէ, տատամտւումով եկեղեցի կ'երթայ ու հազիւ ներս մտած՝ Աստուծոյ դէմ յանդիման կը կանգնի, բայց Սատանան հոն եւս կը կուրցնէ անոր հոգին, որպէսզի չյիշէ իր բազում օրինազանցութիւնները եւ անգիտակցաբար, որ ինք Աստուծոյ առջեւ կը գտնուի: Ծարականները մտիկ չ'ընեն, փառաբանութիւնները չի լսեն, ընթերցուածներու ուսուցումները հոգիէն ներս չեն թափանցեր, իր մեղքերու անօրէնութիւններուն համար ո՛չ կը հեծծծէ եւ ոչ կը հառաչէ, իր հոգիին վերքերուն համար ո՛չ կու լայ եւ ոչ կ'ողբայ, ը՛չ կ'աղօթէ եւ ո՛չ կ'աղերսէ Աստուծոյ եւ ոչ ալ իր արցունքախառն աղաչանքներով Տիրոջ բարկութիւնը կը մեղմէ, իր վատ արարքներուն թիւը չի խոստովանիր. իր անօրէնութիւնները չի քօղագերծեր, այլ՝ կը պահէ զանոնք խուսափելու համար ահաւոր պատիժներէն եւ անթափանցելի խաւարէն:

ՃԱՌԵՐ

**ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ**



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՎՏԱՆՈՒՄԸ

**2.- Պատրաստութիւն ընծաներուն**

Գ.- ԲՈՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱՌԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳ


Յիշատակութեան երրորդ բաժինը կ'ընդգրկէր առանձնակեաց եւ անապատական բոլոր այն առաքինասէր կրօնաւորները, որոնք ճգնողական կեանքով անտեսեցին այն ինչ, որ կեանքին կը պատկանէր, բայց վրկանքի ընդմէջէն սնուցին իրենց հոգիները երկնային եւ յաւիտենական հացով ու դարձան քրիստոնէական տոկուն հաւատքի անմար ջահեր:

Յիշատակութեան շարքին կու գան աւել նալու, նաեւ բոլոր բարեպաշտ թագաւորներն ու աստուածասէր իշխանները, որոնք արդարօրէն դարձան քրիստոնէական կրօնքի ամրակայման ուսուցիչները ...

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024

ԹԻԻ 43

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԿԱՆՆԵՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Եւ. 33.22-34.1: Ա. Կր. 1.18-24: Ստ. 24.27-36

**ԳԻՏ ԽԱՉԻ ՏՕՆ**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ՄՏԹԷՈՍԻ**

24.27-36

Մարդու Որդին պիտի գայ կայծակի նման, որ երբ փայլատակէ՝ կը լուսատրէ ամբողջ երկնակամարը, արեւելքէն արեւմուտք: Արժիւները կը հաւաքուին հոն, ուր դիակ կայ: Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի: Երկինքէն աստղերը պիտի իյնան եւ երկնային մարմինները պիտի սասանին: Ահա մարդու Որդին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թզենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէ՛ք թէ մարդու Որդին գալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ, եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան: Սակայն ո՛չ որ գիտէ, թէ երբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը:

**ՄԱՂԹԱՆՔ**

Տէ՛ր, խաղաղութեան ճամբաներուն մէջ պահէ մեր քայլերը: Տէ՛ր, ուղղէ եւ առաջնորդէ՛ մեզ եւ բոլոր քեզի հաւատացողները, որպէսզի դէպի խաղաղութիւն եւ յաւիտենական կեանք երթանք:

**ՃՐԱԳ ՇԱՐՔԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ քերթ**  
**ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քեկյ. Սարգիսեան**

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ԳԻՏ ԽԱՉԻ



Քրիստոնեական տօներուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ Գիւտ Խաչի տօնը: 313 թուին, Միլանոյի հրովարտակով, երբ քրիստոնեաներուն արտօնուեցաւ ազատօրէն պաշտել նոր կրօնը՝ քրիստոնէութիւնը, Երուսաղէմը դարձաւ քրիստոնեաներուն ուխտավայրը: Աշխարհի չորս կողմէն քրիստոնեաներ ուխտի կ'երթային Երուսաղէմ:

327 թուականին, այս ուխտաւորներուն մէջն էր նաեւ Կոստանդիանոս Կայսեր մայրը՝ Հեղինէ թագուհին: Ան կ'ուզէր գտնել Յիսուսի խաչափայտը, որ կորսուած էր: Ուստի ան բարձրացաւ Գողգոթա լեռը, որ այն ժամանակ կը գործածուէր իբրեւ աղբատեղի:

Հեղինէ թագուհին պեղել տուաւ այն տեղը, ուր կ'ենթադրէին գտնել Յիսուսի խաչափայտը: Անոր ենթադրութիւնը նիշդ դուրս եկաւ եւ փորուած տեղէն ի յայտ եկան երեք խաչափայտեր: Գիտնալու համար, թէ ո՞րն է Յիսուսի խաչափայտը, իւրաքանչիւրը առանձնաբար դրին մեռած մանուկի մը դիակին վրայ: Երբ Յիսուսի խաչափայտը մօտեցուցին մանուկին, ան յարութիւն առաւ: Այսպիսով գիտցան Յիսուսի խաչափայտը, որ հետագային փոքր մասերու վերածելով բաժնեցին եկեղեցիներուն:

# ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ

## Ի՞նչ կը նշանակէ ննջեցեալի եօթնօրէք եւ ի՞նչ ԶԵՒՈՎ կը կԱՏԱՐՈՒ

Հրեաները սովորութիւն ունէին եօթը օր սուգ պահել մեռելիս վրայ, ինչպէս կ'երեւի Յակոբ նահապետի մահէն. «Եկան Ատաղի կալը, որ Յորդանանի անդի կողմն է: Հոն մեծ ու խիստ սաստիկ լացով մը ողբացին եւ իր հօրը եօթը օր սուգ ըրաւ» (Մ. 50.10). Եւ ինչպէս Ղազարոսի յարութեան պատումին մէջ կը տեսնենք, թէ երբ Մարիամն ու Մարթան Զրիստոսի դիմաւորութեան ելան, ներկաները կարծեցին, թէ գերեզման կ'երթան: Առաջին դարուն տնօրինուեցաւ եօթներորդ օրը կատարել Պատարագով եւ Ամբիօքով, եւ այդ եօթներորդ օրուան ընթացքին միայն սգաւորները գերեզման կ'երթան քահանային հետ, ուր Մաշտոցին համաձայն հանգստեան կարգ կը կատարուի:

### ՕԳՆՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Քու խաչդ թող մեզի ապաւեն ըլլայ. Տէ՛ր Յիսուս, երբ Հօրը փառքով երեւիս՝ լուսաւոր ամպերու վրայ: Այն ատեն թող ամօթով չմնանք մենք՝ քեզի յուսացողներս, այլ՝ քու մեծ գօրութեամբդ ուրախանանք՝ քու աջ կողմդ բազմած, իբրեւ լոյսի որդիներ եւ փրկութեան ժառանգորդներ:

# ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

## ՅԻՍՈՒՄ ԿՐ ՏԵՄՆԷ ՄԵՉ, ԿՐ ՃԱՆՉՆԱՅՑ ՄԵՉ

«Բայց Սամարացի մը, որ հոնկէ կ'անցնէր, տեսաւ վիրաւորը եւ գթաց անոր» (Ղ. 10.33): Յատակ է, որ Սամարացին Զրիստոս ինքն է: Մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք «տեսաւ» եւ «գթաց» բառերուն վրայ: Մեր Տէրը տեսնող աչք եւ գթացող սիրտ ունի: Յիսուս անտարբեր չէ մարդոց ցաւին նկատմամբ: Ան կը տեսնէ մեր բաշած նեղութիւնները: Ան տեղեակ է մեր վիշտերէն: Երբ մենք տառապինք՝ ինքն ալ մեզի հետ կը տառապի: Երբ մենք ուրախանանք՝ ինքն ալ մեզի հետ կ'ուրախանայ: Յիշենք, որ ան Ղազարոսի համար լացողներուն հետ լացաւ եւ Կանայի հարսանիքին ընթացքին ուրախացողներուն հետ ուրախացաւ:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴՎԱՐ:

Տէրը գիտէ մեր մասին եւ լաւապէս կը ճանչնայ մեզ: Ան Կը ճանչնայ մեզ մեր ապրած ամբողջ կեանքով, մեր փափաքներով, մեր երապներով, մեր ձգտումներով, մեր ցաւերով, մեր պակասութիւններով, մեր առաւելութիւններով, մեր մեղքերով եւ մեր յանցանքներով: Ան գիտէ մեզ, եւ ասիկա գիտնալը մեզ վստահութեան շունչով պէտք չէ լեցնէ:

### ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ ՕՐՀՆԵԱԼ ՈՂԼԱՅ

# ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

## ԵՐԲ ԱՂՕԹՔՆԵՐՈՒՂ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԿՐ ՓՆՏՈՒՄ ԿԱՍՈՒԾՄԷ, ԿԱՐԴԱ՛Վ՝ ՍԱՂՄՈՍ 66

Ցնծութեան աղաղակներով վԱստուած փառաբանեցէք, ո՛վ համայն աշխարհ. ներբողեցէ՛ք անոր փառաւոր անունը, փառաւոր օրհներգութիւն ընծայեցէք անոր: Աստուծոյ ըսէք. «Սքանչելի՛ են գործերդ ա՛յնքան մեծ է պօրութիւնդ, որ թշնամիներդ ակամայ պիտի խոնարհին քու առջեւդ: Ամբողջ աշխարհը կ'երկրպագէ քեզի, կը ներբողէ քեզ, կը ներբողէ քու անունդ»:

Եկէ՛ք եւ տեսէ՛ք Աստուծոյ գործերը, մարդոց համար կատարած անոր սքանչելի գործերը: Անիկա ծովը ցամաքի վերածեց, եւ իր ժողովուրդը քալելով անցաւ գետէն, հոն մենք ուրախացանք Աստուծով, որ իր պօրութեամբ յաւիտեան կը տիրէ: Անոր աչքը միշտ կը հսկէ ազգերուն վրայ. ուստի ապստամբները թող չհպարտանան:

Օրհնաբանեցէք մեր Աստուածը, ո՛վ ժողովուրդներ, թող ամէնքը լսեն ձեր բարձրաղաղակ օրհներգութիւնը: Անիկա մեզ ողջ պահեց, եւ թոյլ չտուաւ, որ սասանինք:

Այո՛, մեզ փորձեցիր, ո՛վ Աստուած, փորձի ենթարկեցիր այնպէս՝ ինչպէս արծաթը հալոցէն կ'անցընեն վտելու համար:

### ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԷՆ